ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Մարտունի **08.08.2024թ.**

10:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան,

անդամներ՝ Հ. Ղազարյան, Թ. Դավթյան.

հանձնաժողովի քարտուղար ՝ Կ. Սիմոնյան

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը
   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
   3.Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:

2.1 «ՍՄԱՌ» ՍՊԸ -ի, հայտերում արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **«ՍՄԱՌ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած շտկումները :

2.3 Մասնակցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 «**ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/12**» ծածկագրով գնման ընթացակարգի 1,2,3,4,5,6,7,9,10,11 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել **«Սմառ» ՍՊԸ-ն** , որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

3.2 «**ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/12**» ծածկագրով գնման ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել **«Մ-Դ» ՍՊԸ-ն** , որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր՝ ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված մասնակցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.4 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում (միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրով)

ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Հ. Ղազարյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան